## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

N 105
*17 ապրիլ 2018թ.*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N16-Ա, N17-Ա, N18-Ա, N19-Ա որոշումները:

17/04/2018

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ,27փ. 7/6 հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 16-Ա

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՄԶՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի 1-ին կետով.

Որոշում եմ՝

1. Ստեղծել ԼՄ Լեռնապատ գյուղի բնակչության զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների և 1988թ. երկրաշարժից հետո Լեռնապատ համայնքի անօթևան մնացած ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 2014 թվականիօգոստոսի 02-ի N41-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱԶՅԱՆ

2018թ. ապրիլի 05
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք

ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

10 ապրիլի 2018 թվականի թիվ 17-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-041-0169-0029 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով, «Գ. Վեքիլյան» ԱՁ-ի կողմից կատարված տեղանքի չափագրումը՝ հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 17.09.2009թ.-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի(հավելված N 1) 7-րդ կետով(համաձայն որի նշված լիազորությունը միայն համայնքի ղեկավարինն է).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատ համայնքի 06-041-0169-0029 ծածկագրով 0.30084 հա գյուղատնտեսական, այլ հողամասի հողատեսքը փոխադրել 2-րդ կարգի ջրովի վարելահողի:
2. Լեռնապատ համայնքի 06-041-0169-0029 ծածկագրով 0.30084 հա 2-րդ կարգի ջրովի վարելահողը համաձայն հաստատված հատակագծի ճանաչել համայնքային սեփականություն:
3. Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Սարիբեկ Աբազյան

2018թ. ապրիլի 10

գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2018 թվականի թիվ 18-Ա

## 06-041-0141-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնապատի բնակիչ Սոսաննա Արտեմի Աշրաֆյանի դիմումը, «Գ. Վերիյան» ԱՁ-ի կողմից կատարված տեղանքի չափագրման արդյունքում կազմված հատակագիծը և քնութագիրը, ժառանգության իրավունքի 23.03.2018թ.-ի թիվ 343 վկայագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Լեռնապատ համայնքի 06-041-0141-0002 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը և 0,05826 հա-ի նկատմամբ ճանաչել Սուսաննա Արտեմի Աշրաֆյանի(ծնվ. 1943թ.), Արայիկ Վոլոդյայի Աշրաֆյանի(ծնվ. 1970թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Լեռնապատ համայնքի 06-041-0141-0002 ծածկագրում, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1957-1991թթ. կառուցված բնակելի տան և անասնաշենքի նկատմամբ ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականության իրավունքը՝ համաձայն հատակագծի:
3. Ճշտել հողամասի սահմանները համաձայն հաստատված հատակագծի:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 1 փողոց 1 փակուղի 1 տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱՐԱՋՅԱՆ

2018թ. ապրիլի 13
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 19-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ավագանու 2018թ.-ի ապրիլի 13-ի թիվ 10-Ն <<Լեռնապատ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2018թ.-ի փոփոխված բյուջեի՝ եռամսյակային համամասնությունները համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 2018թ.-ի մարտի 17-ի <<Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեի եռամսյակային բախշումը հաստատելու մասին >> N11-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2018թ. ապրիլի 13
գ.Լեռնապատ